



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1305


Հ. ՅԵՐՈՑԵՅԵ-Լ

ԿՈՆԼԵԿՏԻԿ  
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՆԿԱՋՈՒՄՆԵՐԸ



1930-1931 ՏՈՒՆՈՒՄ





Ն. ՅԵՐՈՑԵՅԵՎ


338.1(47)(00)

Ե

ԿՈՒԼԵԿՏԻՎ

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ



ԿՈՆՏԱԿՏԱՆ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1930

Հրատ. № 1218

ՊԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Գրառույ. № 4003(բ) Տիրաժ 5000 Գառվ. 248

## ԿՈԼԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անհատական տնտեսություն վարել՝ նշանակում է — զուր տեղը մեծ քանակությամբ ուժեր վատնել և հաղիվ գոյությունը պաշտպանելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռք բերել, առանց հարկավոր ոգուտներ խոշոր գումարներ հատկացնել մանր ինվենտարին, անհամապատասխան կառուցումներին ու հարմարություններին, յետմուտ գլխության նվաճումներից և ալդպիսով արտադրությունը պահել նախնադարյան վիճակում։ Անհատական տնտեսության մեջ բարդ մեքենան անգործադրելի չէ. տնտեսությունների կոլլեկտիվացման ճանապարհով միայն հնարավոր է գյուղի բարեկեցությունը ամենակարճ ժամանակում արագ կերպով բարձրացնել։

Յեվ ահա, տասնյակ միլիոնավոր գյուղական չքավոր-միջակ տնտեսությունների հալացքներն ուղղված են տնտեսությունների վերակառուցման այս ձևին։

Գյուղատնտեսական յերիտասարդ կոլլեկտիվ արտադրությունը իր գոյության հենց սկզբից

ապացուցեց իր առավելութունը անհատական տնտեսութեան հանդեպ: Որինակի համար վերջնենք հենց թեկուզ կնոջ աշխատանքը: Գյուղում հատկապես կնոջ վրա ծանրանում են հետևյալ աշխատանքները. նա աշխատում է դաշտում, բանջարանոցում, խնամում է ընտանի կենդանիներին ու թռչուններին, կերակուր է պատրաստում, դատարարում է չերեխաներին և շատ ուրիշ աշխատանքներ է կատարում: Միանգամայն հասկանալի չէ, Վոր այսպիսի պայմաններում աշխատանքների լրիվ և լավ կատարում սպասել չի կարելի: Միանգամայն այլ է կոլլեկտիվ արտադրութեան մեջ: Այստեղ վոմանք հատկապես ըզբաղվում են անասնապահութեամբ, ուրիշները դաշտային աշխատանքներ են կատարում, չերրորդ խումբը տնային գործերով է զբաղվում և այլն և այլն: Մի խոսքով՝ կոլլեկտիվ արտադրութեան դեպքում լիուլի հնարավորութիւն է ըստեղծվում պարտավորութիւնները բաժանել կոլլեկտիվի անդամների մեջ, վորից տնտեսութիւնը մեծապես շահում է: Աշխատանքների ճիշտ բաժանման հետևանքով տարբեր ճշուղերի աշխատավորներն իրենց աշխատանքներում մասնագիտանում են, վորով աշխատանքը հեշտանում է և նրա արտադրողականութիւնը բարձրանում: Որինակ՝ միջանի կոլտնտեսութիւններում այն-

պիսի կարգ եւ սահմանված, վորի շնորհիւ կթողուհիներն ու անասնապահները մշտապէս միևնույն աշխատանքն են տանում: Դրա արդյունքը լինում եւ այն, վոր կթողներն ամեն որ իրենց միևնույն աշխատանքներում վարժվելով, աշխատանքները կատարում են միջանի անգամ ավելի արագ, քան նրանք, վոր մշտապէս նույն աշխատանքը չեն կատարում: Բացի այդ, մշտապէս նույն աշխատանքը տանելով, կթողներն ուսումնասիրում են յուրաքանչյուր կովի բնավորութիւնն ու առանձնահատկութիւնները: Անասնապահի աշխատանքներում ևս նույնն ենք տեսնում: Ամեն որ միևնույն աշխատանքը կատարելով, նրանք աշխատանքին աջակց են ընտելանում, վոր անասունների կերի նորմայի վորոշումն անգամ նրանց համար դառնում եւ սովորական, դատարկ մի գործ: Անասնապահների աշխատանքը չափազանց բարդ եւ, թեւ մեղաւնում հաճախ այդ չեն ել հասկանում: Կոլլեկտիւ աշխատանքի պայմաններում անասնապահն ամեն որ դիտում և հսկում եւ յուրաքանչյուր անասունին և տեսնում, թե նա կերն ինչպէս եւ ուտում, յուրաքանչյուր անասուն ինչ բնավորութիւն ունի, ապա ուրեմն և նրա հետ ինչպէս պիտի վարվի: Այս հարցերը չափազանց կարեւոր են և անասնապահութիւնը հաջող տանելու

տեսակետից հսկայական գործնական նշանակութիւն ունեն:

Բազմաթիվ կոլտնտեսութիւններում մի շարք այսպիսի առավելութիւնների հետևանքով գյուղատնտեսական ճյուղերն արագ կերպով աճնշափ բարձրացան, վոր խոշոր չափով գերազանցել են նախապատերազմյան աստիճաններին և գյուղական տնտեսութիւնների տիրող մասսայի ձեռք բերած արդյունքներին:

Գյուղացիութիւն չքավոր-միջակ մասը, մի շարք առաջավոր կոլտնտեսութիւնների փորձից, համոզվեց, վոր տնտեսութիւն կոլլեկտիվ վարումը արտադրութիւնը միջանի անգամ բարձրացնում է, թեթևացնում մասնավոր տնտեսութիւններին հատուկ ծանր ու յերբեմն էլ անմիտ աշխատանքները և կոլլեկտիվացված մասսային կուլտուրական, ստեղծագործական վերելքի լայն հնարավորութիւններ է ստեղծում:

Կոլտնտեսութիւնների այդ առավելութիւնների արդյունքը յեղավ աճն, վոր կոլտնտեսութիւնները բացառիկ թափով աճեցին. այդ յերևում է հետևյալ հաշիւից: ՌՍՖՍՀ մեջ կոլտնտեսութիւններ ընդամենը յեղել են՝

|         |        |
|---------|--------|
| 1925 թ. | 10.732 |
| 1927 թ. | 11 306 |
| 1928 թ. | 23.460 |
| 1929 թ. | 40.000 |

Կոլլեկտիվային շարժման կատաղի ալիքը, ինչպես նաև նրանց միջև խոշոր և խոշորագույն միությունների կազմակերպումը ցույց ե տալիս, վոր գյուղացիության գլխավոր մասսան հեռացել ե անհատական տնտեսության տեսակետից և կտրականապես անցել ե տնտեսության կոլլեկտիվորեն, համայնական և սոցիալիստական ձևով կազմակերպելու կողմը:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ  
ՏԵՍԱԿԵՏԻՑ ԿՈՆՏԵՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՆՁ ԵՆ  
ՁԵՌՔ ԲԵՐԵԼ

Գյուղացիական տնտեսությունները, շնորհիվ մի շարք հանգամանքների, հատկապես դրանց ցրվածության և աշխատավորներին բազմապիսի աշխատանքներով ծանրաբեռնելու անհրաժեշտության—ավելի շատ են երգիս չեն վատնում. որին ահ՝ մի հեկտար տարածության վրա գյուղացիական տնտեսության ծախսած են երգիան անհամեմատ ավելի խոշոր ե, բան գյուղատնտեսական խոշոր արգյունաբերությանը Կոլտնտեսություններում, չնայած աշխատանքի տակավին անդարդացած ձևերին, բանվորական ուժը, աշխատանքային միավորների հաշվով, նկատելիորեն կըրճատվում ե, իսկ դրանից արգյունքները վոչ միայն չեն վատանում, այլ ընդհակառակը՝ լավա-

նույն են: Այդ հաստատումն են Ուկրալինայի տա-  
փաստանային գոտու հետազոտման տվյալները:

Տալիս ենք գյուղացիական տնտեսություն-  
ների սարքեր խմբերի ու կոլտնտեսությունների  
բանվորական ուժերի ծախսումների համեմատա-  
կան տվյալները:

| ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ-<br>ՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ                                             | Քանի՞ բանվորա-<br>կան ու է ծախս-<br>ված մի հեկտար<br>ցորենի վրա | Մի հեկտար ցորե-<br>նի բերքը (ցենտ-<br>ները) | Քանի՞ բանվորա-<br>կան ու է ծախս-<br>ված մի հեկտար<br>զարու վրա | Մի հեկտար զարու<br>բերքը (ցենտներ-<br>ը) |
|-----------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------|---------------------------------------------|----------------------------------------------------------------|------------------------------------------|
| Մինչև 1000 ա. ընդ-<br>հանուր մուտք ու-<br>նեցող գյուղացի-<br>ական տնտեսութ. | 12,17                                                           | 6,93                                        | 15,28                                                          | 7,95                                     |
| 1000—2500 ա. ընդ-<br>հանուր մուտք ու-<br>նեցող գյուղացի-<br>ական տնտեսութ.  | 11,35                                                           | 9,95                                        | 11,16                                                          | 8,60                                     |
| 2500 ուրբուրդ ավե-<br>լի ընդհանուր<br>մուտք ունեցող<br>գյուղ. տնտեսութ.     | 10,80                                                           | 9,00                                        | 10,34                                                          | 12,30                                    |
| Էոմմունաներում և<br>արտերերում .                                            | 10,80                                                           | 11,88                                       | 7,14                                                           | 11,97                                    |

Այս ցուցակից պարզ տեսնու՞մ ենք, վոր, համաձայն վերոհիշյալ պայմանների, կոլտնտեսու-թյուններն ամենուրեք իջեցնում են բանվորա-կան ուժի ծախսման նորման, վորի հետեանքով բերքը վոչ միայն չի պակասում, ալ, ընդհակա-ռակը, բերքատվութունը զգալիորեն բարձրա-նում է:

Հատկապես հետաքրքիր է այն փաստը, վոր անհատական տնտեսությունները պետք յեղա-ծից ավելի ինվենտար ունեն, հակառակ դրանց այդ տեսակետից խղճուկ սպասարկված լինելուն: Կիրիլլովսկ գյուղակում (Տադանրոզի շրջան) այդ հարցի հետազոտության ժամանակ պարզվեց հե-տևյալը.

| ՅԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ<br>ԳՈՐԾԻՔՆԵՐ | Գյուղում ընդամենը կան | Նույն տարածու-թյան կոլլեկտիվ ոգտագործման դեպքում պահանջվում է | Ուրեմն գյուղում ավելորդ են |
|-----------------------------|-----------------------|---------------------------------------------------------------|----------------------------|
| Դուխաններ . . . . .         | 34                    | 14                                                            | 20                         |
| Տափաններ . . . . .          | 64                    | 8                                                             | 56                         |
| Յանոդ մեքենաներ . . .       | 27                    | 5                                                             | 22                         |
| Լորոզբեկաներ . . . . .      | 27                    | 5                                                             | 22                         |

Դուրս ե գալիս, վոր անհատական տնտեսությունները հարկադրված են քաշել ավելորդ 20 գութանի, 56 տափանի, 22 ցանոդ մեքենաների և 22 լոբոգրեկաների ավելորդ ծախսերի ամբողջ ծանրությունը: Այդ առաջանում ե նրանից, վոր յուրաքանչյուր տնտեսութուն, ցանկանալով ապահովել իր տնտեսության բոլոր ճյուղերը, հարկադրված ե ունենալ յերկրագործական ինվենտարի լրիվ կոմպլեկտ, թեկուզ այդպիսիք լրիվ ծանրաբեռնվածություն ել չունենան: Կլեկտիվ արդյունաբերության մեջ նման դրություն չի ստեղծվում. ինվենտարի քանակը վորոշվում ե ըստ ամբողջ տնտեսության համապատասխան անհրաժեշտ կարիքի: Այսպիսի կլորճատում կարելի չե կատարել թեկուզ այն դեպքում, երբ Կոլանտեսությունը իր արդյունաբերո թ ունր յայն չափով մեքենայացման ե լեն թ րկում: Տնտեսություններն ի վենտարով և բոլոր ուժ վ ապահովելու հարցի ուսումնասիրությունը մեզ բերում ե այն համոզման, վոր ինվենտարս իս յավ սարքավորում ունեցող կոլտնտեսությունների ինվենտարային ծախսերը (100 հեկտար ցանքսի հաշվով) ավելի քիչ են, քան դժուարացիական անհատական տնտեսություններինը:

Մեր տրամադրութեան տակ լեղած տվյալները մեզ հետեյալն են ասում.

100 հեկտար ցանքի սարածութեան վրա գործող ինվենսարն ու քառորդ ուծը

| ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ-<br>ՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ                                             | Գութաններ | Ցանող<br>մեքենաներ | Քաշող<br>ուժի<br>միավորներ |
|-----------------------------------------------------------------------------|-----------|--------------------|----------------------------|
| Մինչև 1000 ք. ընդ-<br>հանուր մուտք ու-<br>նեցող գյուղացի-<br>ական տնտեսութ. | 6,22      | 2,75               | 10,89                      |
| 1000—2500 ք. ընդ-<br>հանուր մուտք ու-<br>նեցող գյուղացի-<br>ական տնտեսութ.  | 4,85      | 4,03               | 10,80                      |
| 2500 ք. և ավելի<br>մուտք ունեցող<br>գյուղացիական<br>տնտեսությունն.          | 5,22      | 3,02               | 9,15                       |
| Կոլտնտեսություն-<br>ները . . . . .                                          | 2,75      | 1,37               | 8,88                       |

Չշմարիտ է, վոր կոլտնտեսությունները ին-  
վենտարն ավելի խոշոր չափով մեքենաներով լը-  
րացնելու կարիք ունեն, սակայն արտադրու-

Թյուճը ռացիոնալիզացիայի յենթարկելով, ին-  
վենտարի քանակը կամ դրա համար կատարված  
ծախսերը, ցանքսի հեկտարների հաշվով, չեն  
բարձրանա և յեթե բարձրանան ել, ալդ կլինի  
շատ չնչին:

Շնորհիվ արտադրողականության բարձրաց-  
ման և աշխատանքների ռացիոնալացման, կոլ-  
լեկտիվ տնտեսավարությունը ծախսերը պակա-  
սեցնում ե և նպաստում ե այս կամ այն ար-  
դյունքի արժեքի իջեցման: Ճշմարիտ ե, վոր ալդ  
խիստ կարևոր գործի մանրագնին հետազոտու-  
թյունը հեշտ չե, և մեր ձեռքի տակ չունենք,  
սակայն մասնակի ուսումնասիրությունները վկա-  
յում են, վոր կոլտնտեսություններն աշխատանքի  
արժեքը կտրականապես իջեցնում են: Ինչպես,  
որինակ, Կենտրոնական-Սևահողային շրջանի  
«Կարմիր Հոկտեմբեր» կոմսունայում և նրա շրջ-  
ապատի գյուղացիական տնտեսություններում  
կատարված աշխատանքների արժեքների համե-  
մատությունից պարզվեց հետևյալը (եջ 13, աղ.):

Այդ աղյուսակից յերևում ե, թե կոլտնտե-  
սությունը, շնորհիվ արտադրության կոլլեկտիվ  
ձևի, ինչպիսի խոշոր խնայողություն ե ունենում:  
Այլ կոլտնտեսություններում դրությունը վոչ  
միայն վատ չե, այլ նույնիսկ շատ դեպքերում  
ավելի լավ ե, մասնավորապես, յերբ կոլտնտեսու-

# Մի հեկտար ցանքի ծախսը ուրիշներով

| ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ<br>ՏԵՍԱԿՆԵՐԸ | Աշխատանքների<br>արժեքը կոմուն-<br>ալում | Աշխատանքների<br>արժեքները գյու-<br>ղացիների մոտ | կոմունան մեկ<br>հեկտարում լինե-<br>լու է |
|---------------------------|-----------------------------------------|-------------------------------------------------|------------------------------------------|
| Հերկը . . . . .           | 5,04                                    | 5,85                                            | 0,81                                     |
| Կրկնավարը . . . . .       | 2,55                                    | 3,60                                            | 1,05                                     |
| Ցափանեկը . . . . .        | 0,65                                    | 1,08                                            | 0,43                                     |
| Սերմը և ցանեկը . . . . .  | 4,95                                    | 6,93                                            | 1,98                                     |
| Քաղն ու կապը . . . . .    | 7,79                                    | 9,45                                            | 1,66                                     |
| Կալսեկը . . . . .         | 4,32                                    | 7,20                                            | 2,88                                     |

Թյու՛նը բարդ մեքենաները բավականաչափ լրիվ  
կոմպլեկտավորել և իր արդյունաբերությունը  
լավ է կազմակերպել:

Ներկայումս, լերը ինվենտարի հսկայական  
պահունջ կա, դրա ոգտագործումը հանդիսանում  
է չափազանց կարևոր մի խնդիր: Ինվենտարի  
անկանոն ոգտագործումը մեզ տանում է դեպի  
աշխատանքի թանձրացում, իսկ դրանից հաճախ  
սխալ կերպով յեղրակացնում են, թե այս կամ  
այն մեքենան անպետք է: Յեղել են դեպքեր,  
յերբ ինվենտարի գործի վատ և սխալ կազմա-

կերպման հետևանքով աշխատանքն այնքան է  
թանգացել, վոր այս կամ այն մեքենայի գործա-  
դրումը դարձել է անհնարին։ Սակայն այս դեպ-  
քերում կոլտնտեսությունները քայլում են առա-  
ջին շարքում։

Կենտրոնական-Արդյունաբերական շրջանի  
տրակտորների աշխատանքների հետադոտու-  
թյունը հետևյալն է պարզել.

Կոմսոնաներում ու արտելներում մի հեկ-  
տար վարի միջին արժեքն է 7 ռ. 22 կ., հողը  
միացյալ ուժերով մշակող ընկերություններում —  
8 ռ. 65 կսպ., անհատական գյուղացիական հո-  
ղերի վրա աշխատող վարկային ընկերություն-  
ներում — 15 ռ. 81 կ., գյուղացիական հողերի  
վրա աշխատող գյուղական փոխոգկոմիներում —  
16 ռ. 43 կ.։

Այս տվյալներն ինքնին վկայում են, թե  
կոլլեկտիվ հողագործությունը ինչպիսի հսկայա-  
կան առավելութուն ունի։ Կոլտնտեսություն-  
ները գործնականում ապացուցելով կոլլեկտիվ  
աշխատանքի անհրաժեշտությունը, շարունակա-  
բար նորանոր խոշոր արդյունքների կհասնեն։

Կոլլեկտիվ աշխատանքը հեշտացնում է հո-  
ղագործական աշխատանքները և բարձրացնում  
է դրանց արդյունքը։

Գյուղատնտեսական արդյունաբերության

կողմէկտիվացումը կրճատուով ե ինվենտարալին ծախսերը և հնարավորութլուն ե տալիս ունենալ միայն այն, ինչ վոր տնտեսութլան համար անհրաժեշտ ե:

Կողմէկտիվ արդյունաբերութլան մեջ, շնորհիվ բարդ մեքենաների գործադրման հնարավորութլան, բոլոր աշխատանքները թե եժան են նստում և թե վորակապես ավելի բարձր են լինում:

## ԿՈՆՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ԴԱՇՏԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կոլտնտեսութլունները տակավին նոր և հազիվ ձևավորված կազմակերպութլուններ են, այդ պատճառով ել մենք նրանցից խոշոր աշխատանքներ և ապշեցուցիչ արդյունքներ պահանջել չենք կարող: Մակայն գաշտալին տնտեսութլան բնագավառում, վորտեղ վերակառուցումը համեմատաբար ավելի կարճ ժամանակամիջոցում կարելի յե անցկացնել, մենք կարող ենք կոլտնտեսութլուններից համապատասխան հաշվետվութլուն պահանջել: Դաշտալին տնտեսութլան բնագավառում կոլտնտեսութլունները պիտի լուծուան տան հետևյալ խնդիրներին.

1. Ցանքսերի ընդլայնումը իհաշիվ տակավին անմշակ հողային տարածութլունների:

2. Բերքատվության բարձրացում, թեկուզ միջակ կուլտուրական տնտեսության սահմաններում:

3. Դաշտային տնտեսության նպատակահարմար վերակառուցումը կուլտուրաների կազմի ու բնույթի սեռականությամբ:

Դաշտային տնտեսության ասպարիզում կուլտնտեսությունները գործնականում շատ խոշոր աշխատանք են տարել, սակայն, առաջադրված խնդիրները լրիվ չափով լուծելու համար, այսուհետև նրանք իրենց ուժերն են ավելի մեծ չափով պիտի լարեն: Հարկավոր է պարզ ասել, վոր աշխատանք տարվել է և այն էլ խոշոր աշխատանք, սակայն դա միայն սկիզբն է այն աշխատանքի, վոր կուլտնտեսությունները հետագայում պարտավոր են տանել: Այսպես, որինակ, կոլեկտիվ տնտեսություններում, թե անցյալում և թե ներկայումս, վարելի հողերը հսկայական չափով չեն ընդգրկված: Միջանի կուլտնտեսություններում վարելի տարածության միայն 25—30 տոկոսն է մշակված, իսկ մնացյալ 70—75 տոկոսը շարունակում են մնալ վորպես «անբերրի» հողեր: Ճիշտ է, վոր այդպիսի կուլտնտեսությունները քիչ են, սակայն այդպիսիների հենց լինելը ցույց է տալիս, վոր վարելի հողերի մշակման ասպարիզում հսկայական աշխատանք

և առաջադրված: Մակայն կոլտնտեսութիւնը նույնիսկ աղքատիկ քաշող ուժերով սկսում է այդ աղատ հողերը ցանել: Անմշակ հողերի վարումն աճում է հետևյալ կարգով՝

### ՀՈՂԵՐԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՏՈԿՈՍԸ

| Տարի               | %    | %             |
|--------------------|------|---------------|
| 1926 թ. . . . .    | 54,0 |               |
| 1927/28 թ. . . . . | 66,0 |               |
| 1928/29 թ. . . . . | 75,0 | (մոտավորապես) |

Վերոհիշյալ թվերից յերևում է, վոր կոլտնտեսութիւնների կողմից չհերկված հողերի տկոսը թեև զգալիորեն պակասել է, բայց և այնպես տակավին բարձր է: Այդ պատճառով ել միանգամայն հասկանալի է, վոր վարելի հողերի այս վիճակով բավարարվել անհնարին է, ուստի և, այս աննորմալ յերևույթն արմատապես վերացնելու համար, կոլտնտեսութիւններից նորանոր խիստ մեծ ջանքեր են պահանջվում:

Ինչ վերաբերում է բերքատվության բարձրացման, կոլտնտեսութիւնները կարող են իրենց առաջած անկասկածելի խոշոր արդյունքների մասին հպարտությամբ խոսել: Բերքատվության բարձրացումը կոլտնտեսութիւններում ակընհայտնի է, անխտիր բոլոր շրջաններում. շատ անդերում այդ գերազանցում է անհատական

տնտեսության բերքատվությանը 200 — 300 տոկոսով: Կենտվիճվարի 1928 թ. հետազոտող-  
թյունը պարզել է, վոր անհատական գյուղացիա-  
կան տնտեսությունների բերքի հանդեպ կուտըն-  
տեսությունների բերքը շատ բարձր է:

(Մի նեկսարի բերքը ցենսներնետով)

|                                                 | Շ Ր Զ Ա Ն Ն Ե Ր |                                 |                               |          |        |                   |          |      |      |               |
|-------------------------------------------------|-----------------|---------------------------------|-------------------------------|----------|--------|-------------------|----------|------|------|---------------|
|                                                 | Արևմտյան        | Կենտրոնական-<br>Արդյունար. շրջ. | Կենտրոնական-<br>Սևհողյան շրջ. | Վյատկայի | Ուրալի | Ստորին<br>վոլգայի | Ուկրաինա | ԲՍՖՀ | Ղրիմ | Հյուս. Կովկաս |
| Համար                                           |                 |                                 |                               |          |        |                   |          |      |      |               |
| Գյուղացիական<br>տնտեսություն-<br>ներում . . . . | 7,0             | 8,0                             | 9,0                           | 6,0      | 6,0    | 5,0               | 9,0      | 6,0  | —    | —             |
| Գոմմուռաներում                                  | 9,0             | 10,0                            | 12,0                          | 7,0      | 7,0    | 7,0               | 10,0     | 8,0  | —    | —             |
| Առնագ. ցուրն                                    |                 |                                 |                               |          |        |                   |          |      |      |               |
| Գյուղացիական<br>տնտեսություն-<br>ներում . . . . | —               | —                               | 9,0                           | —        | —      | —                 | 10,0     | —    | 7,0  | 5,0           |
| Գոմմուռաներում                                  | —               | —                               | 12,0                          | —        | —      | —                 | 13,0     | —    | 8,0  | 6,0           |

Այս հետազոտության տվյալները ցույց են  
տալիս, վոր բերքատվության տեսակետից կու-  
տնտեսություններն անհատական տնտեսություն-  
ներից բավականին գերազանցել են: Ճիշտ է,  
վոր կուտնտեսությունների միջին բերքով բավա-

բարձր չի կարելի. դեռևս շատ աշխատանք սլի-  
տի թափել, վորպեսզի մի հեկտարի միջին բեր-  
քատվութիւնը հասցվի 15—20 ցենտներին: Սա-  
կայն առաջագիմութեան փաստն ինքնին ապա-  
հովում է հետագա հաջողութիւնը բերքատվու-  
թեան բարձրացման նվիրված աշխատանքներում:

Ծանոթանալով առանձին կոլտնտեսութիւն-  
ների ձեռք բերած բարձր արդիւնքներին, պետք  
է ասել, վոր բերքատվութիւնը նրանցում հաս-  
նում է շատ մեծ չափերի: Այսպէս, որինակ,  
«Հեղափոխութեան բոց» կոմսունայի (Խոպերսկի  
շրջանում) 1929 թ. բերքը տարբերվում է նրա  
շրջապատի գյուղացիական տնտեսութիւնների  
բերքից հետեյալ չափով.

|                                                   | Մի հեկտարի բերքը<br>ցենտներով |       |        |
|---------------------------------------------------|-------------------------------|-------|--------|
|                                                   | Ցորեն                         | Հաճար | Վարսակ |
| Կոմսունայում . . . . .                            | 9,1                           | 12,5  | 15,8   |
| Գյուղացիական տնտեսական<br>տնտեսութիւններում . . . | 6,6                           | 8,3   | 10,8   |

Այս թվերից յերևում է, վոր կոմսունայի  
բերքատվութիւնը շրջապատի գյուղացիական  
հողերի բերքատվութիւնից մոտ 50 տոկոսով  
բարձր է չեղել:

Սակայն ունենք դեպքեր, յերբ բերքատվության բարձրացումն ավելի խոշոր չափերի յե հասնում: Որինակ՝ համաձայն Պ. Յա. Տադեուշի տեղեկությունների, Դոնյան շրջանի «Ջրավորի աշխատանք» ընկերությունը բերքատվության գործում ախպիսի արդյունքների յե հասել:

(Մի հեկտարի բերքը ցեմենտներով)

|                 | Աշնանացան<br>հաճաղ | Աշնանացան<br>ցորեն | Գարնանա-<br>ցան ցորեն | Գարի | Վաթակ |
|-----------------|--------------------|--------------------|-----------------------|------|-------|
| Ընկերության մոտ | 16,3               | 18,8               | 8,2                   | 16,3 | 14,7  |
| Շրջանում        | 7,3                | 6,5                | 5,7                   | 7,3  | 7,3   |

Դարձյալ նույն Տադեուշի տեղեկությունների համաձայն, Տագանրոգի շրջանի «Կարմիր աստղ» կոմմունան եւ ավելի ապշեցուցիչ արդյունքների յե հասել:

Այդ կոմմունայի հողերի 5 տարվա միջին բերքատվությունը հետևյալն է.

## (Մի ճեկատրի բերքը ցեմենտներով)

|                        | Աշխատող-<br>յուն | Փարմամ-<br>յան ցուցիչ | Փարի | Ցեմենտ-<br>յուն | Արժա-<br>զեկ |
|------------------------|------------------|-----------------------|------|-----------------|--------------|
| Կոմունա-<br>յում . . . | 28,2             | 10,8                  | 14,2 | 21,6            | 10,4         |
| Շրջանում               | 8,7              | 6,6                   | 7,8  | 14,6            | 6,2          |

Կարելի է բազմաթիվ որինակներ բերել, վորոնք կհաստատելին կոլտնտեսությունների բերքատվության բարձրացման ասպարիզում ձեռք բերած խոշոր հաջողությունները: Այդ հաստատվում է նաև Արմավիրի շրջանի (Հյուս. Կովկաս) 1929 թ. ամռանը կատարած մասսայական հետազոտությամբ: Պարզվել է, վոր բերքատվությունը կոլտնտեսություններում զգալիորեն ավելի բարձր է, քան ամբողջ շրջանում:

Այսպես, հետազոտող հասուկ կոմիսսիայի տեղեկությունները ցույց են տալիս, վոր կոլտնտեսություններում մի հեկտարից ստացվել է 30,0 ցենտներ բերք, աչնինչ շրջանի մյուս տնտեսություններից — 11,8 ցենտներ:

Այսպիսով, Արմավիրի շրջանի կոլտնտեսությունները հասել են գրեթե յերեք անգամ ավելի բարձր բերքատվության, քան շրջանի մյուս բոլոր տնտեսությունները:

Միանգամայն պարզ է, վոր հողի արտադրողականության ամեն տեսակի բարձրացումը հետևանք չէ սուկ այն բանի, վոր մի հողամաս ձևակերպված է կոլտնտեսության կանոնադրությամբ, իսկ մի ուրիշն անհատական ուստադործման իրավունքին է լինթակա: Իհարկե, ցանքսերի հանրայնացման փաստն ու փոքր հողամասերի ու միջնակների վերացումը բերքի քանակի վրա հսկայական նշանակություն են ունենում. բայց հիմնականում բերքատվությունը բավականաչափ բարձրանում է մշակման զարգացած մեքենաներով, ուղիղ սերմնափոխությամբ, տեսակների կուլտուրաներով, սերմերի մաքրումով և այրումով և այլն:

Կոլտնտեսությունը, սերտորեն կապված լինելով գյուղատնտեսական դիտություն հետ և միաժամանակ իր անդամների վրա ազդեցություն ունենալով, կկարողանա ավելի կատարելագործված միջոցները լիապես գործադրել: Կոլտնտեսության մեջ հնարավոր է աշխատանքը և քաշող ուժը բաշխել կանոնավոր կերպով և համաչափ. լրիվ հնարավորություն է տրվում ոգտվել կուլտուրական տնտեսության աշխատանքի բոլոր գործնական ձևերից: Այսպես, որինակ, «Դրուժբա» արտելը (Թաթ. հանրապետություն) դեռևս 1928 թ. իր տնտեսությունը հիմնել է հետևյալ պայմաններով.

Յանքս ընտրովի սերմերով—100 տոկոսով.  
վազաժամ հերկ—100 տոկոսով, մաքրել բոլոր  
սերմերը, շարքացան դանքսալին տարածության  
80 տոկոսը և հողային տարածության 80 տո-  
կոսը հերկել ուշ աշնանը:

Ահա թե ինչու կոլտնտեսությունների հսկա-  
յական մասսան բարձր բերքի յե հասել:

### ԲԱԶՄԱԴԱՇՏՅԱՆ ՍԻՍՏԵՄ

Վերականգնման շրջանի հենց սկզբից համառ  
պայքար է տարվել հողուտ բազմադաշտյան սեր-  
մափոխության: Ձգտել են սովյալ շրջանի պայ-  
մաններին ավելի հարմարվող, ավելի կայուն դաշ-  
տային տնտեսություն ստեղծել:

Անհատական տնտեսության պայմաններում  
բազմադաշտյան սխտեմին անցնելը չափազանց  
դժվար է: Գործը միանգամա՛յն այլ պատկեր ու-  
նի կոլլեկտիվ չերկրագործության պայմաննե-  
րում: Յե՛վ աչտեղ բազմադաշտյան սխտեմի գա-  
ղափարն որ ավուր ավելի խորն է թափանցում  
տնտեսության գործնական աշխատանքներում:  
Չնայած մի շարք խոչընդոտներին, բազմադաշ-  
տյան սերմափոխության անցած կոլտնտեսու-  
թյունների թիվը բավականին շատ է: Կենտ-  
րոնական 1928 թվին կատարած հետազոտու-  
թյունը պարզել է, Վոր բազմադաշտյան սխտե-

մին անցել են հետևյալ քանակությամբ կուտըն-  
տեսություններ<sup>1</sup>

| ԿՈՆՏՆԵՆՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ<br>ՏԵՍԱԿՆԵՐԸ       | Կազմակերպված<br>մինչև 1/1 1928 թ. | Կազմակերպված<br>1928 թվին |
|----------------------------------------|-----------------------------------|---------------------------|
|                                        | Տ ո կ ո ս ն ե ռ ո վ               |                           |
| Գյուղատնտեսակ. կոմմունաներ             | 86,3                              | 66,7                      |
| » արտելներ .                           | 41,1                              | 20,7                      |
| Соз <sup>1</sup> ) ընկերություններ . . | 41,7                              | 25,2                      |

Այս տվյալներից բխում է, վոր կոմմունա-  
ները, բազմադաշտյան սիստեմին անցնելով, ա-  
մենաբարձր տոկոսն են տալիս:

### ԱՊՐԱՆՔԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԿՈՆՏՆԵՆՏՈՒԹՅՈՒՆ- ՆԵՐԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՎԵԼՑՈՒԿԸ

Մեր պայմաններում տնտեսությունը պիտի  
կարողանա վորքան կարելի յեղատ քանակության  
մթերքներ շուկա դուրս բերել: Կուտնտեսու-  
թյունները հենց իրենց կազմակերպման սկզբից  
անմիջական նպատակ են դնում մաքսիմում հնա-  
րավորության սահմաններում բարձրացնել ապ-

<sup>1</sup>) Совместной обработки земли.

րանքալին արդյունաբերությունը: Ճշմարիտ է, վոր մենք դեռևս հեռու յենք ասն քանից, ինչ կոլլեկտիվ տնտեսությունից պահանջում է ժամանակակից տնտեսական դրությունը, սակայն տնտեսությունների ապրանքային արտադրության անշեղ զարգացումն ապահովում է այդ ուղղությամբ ձեռք բերվելիք անկասկած նվաճումները:

Մոտավոր հաշիվների համաձայն կոլտնտեսությունների տարեկան ապրանքայնությունը հաշվվում է հետևյալ մեծություններով՝

| Տ Ա Ր Ի Ն Ե Ր | Կոլտնտեսություններում | Դյուղացիական տնտեսությունն. |
|---------------|-----------------------|-----------------------------|
|               | Տ ո կ ո ս ն ե ր ո վ   |                             |
| 1927          | 27,5                  | 16,0                        |
| 1928          | 34,0                  | 18,0                        |
| 1929          | 40,0                  | 20,0                        |

Վորոշակի պիտի ասել, վոր տնտեսությունների ապրանքալին արտադրությունը դեռևս ցածր է. սակայն անհատական տնտեսությունների համեմատությամբ դա բավականին բարձր է, և կոլտնտեսություններն այդ ասպարիզում բավականին խոշոր արդյունքների վն հասել: Ա-

ռանձին ճյուղերի ապրանքային արտադրության տոկոսը ել ավելի խոշոր չափով ե բարձրանում: Այսպես, որինակ, Շատրովյան միության իննը կոլտնտեսությունների կաթնամթերքները (1928 թ. հունվարի 1-ից առ 1-ն հուն. 1929 թ.) բաշխվում ե հետևյալ ձևով.

|                               |        |
|-------------------------------|--------|
|                               | % 0/0  |
| Կոլտնտեսությունների անդամների |        |
| կարիքների համար               | 31,62  |
| Հորթերին կերակրելու համար     | 6,01   |
| Գոճիններին                    | » 0,71 |
| Գառներին                      | » 0,03 |
| Ապրանքային մաս                | 61,63  |

Ընդամենը՝ 100 0/0

Բոլոր տեսակի կենսամթերքների բավարար հաշվառք չունենալու հետևանքով բերում ենք սոսկ արտահանված հացի քանակի տվյալները:

Կոլտնտեսությունները, թեև հացի վաճառահանման ստալարիզում թե տնտեսապես և թե կազմակերպչորեն չեղել են թույլ, այնուամենայնիվ անհատական տնտեսություններին գերազանցել են: Վաճառված հացահատիկների ընդհանուր չափը չերևում ե հետևյալ թվերից.

1928-29 թ. ընդամենը հանձնված ե— 6,300  
հազ. ցենտներ:

1929-30 թ. յենթադրվում ե հանձնել—16,600  
հազ. ցենտներ:

Զի կարելի չընդգծել այն հանգամանքը, վոր հանձնման սկզբի ամիսներին կոլտնտեսությունների տեսակարար կշիռը շատ ավելի խոշոր է, քան այդ յենթադրվում է ըստ նրանց ունեցած տարածության չափի։ Նկատված է, վոր կոլտնտեսությունները, ըստ իրենց բռնած տարածության, ունենալով 5 տոկոսի տեսակարար կշիռ, միերման առաջին ամսին հանձնել են ամբողջ շըրջանի միերքների 25 տոկոսը։

Համենայն դեպս, ապրանքային արտադրության և միերքների իր ժամանակին վաճառահանելու դործում կոլտնտեսություններն անկասկածելիորեն գերադանցում են անկաղմակերպ արտադրողներին։ Զիշտ է, վոր այդ արդյունքները կոլտնտեսությունների ակտիվին բավարարել և հանգստացնել չեն կարող, ինչպես նաև հետագայում ավելորդ հացը հանձնելու նրանց լարված ջանքերը հարկադրաբար կանգնեցնել չեն կարող։ Ընդհակառակը, պիտի ձգտել ել ավելի բարձրացնել ապրանքային արտադրությունը և դուրացնել դրանց արագ հանձնումը։

## ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՀՅՈՒՂԵՐՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Շնորհիվ դաշտային տնտեսության միջոցների համեմատաբար պարզ ու էժան լինելուն,

կոլտնտեսությունների այս բնագավառում ձեռք բերած հաջողություններն ավելի մասսայական բնույթ ունեն։ Չափազանց սակավթիվ են այն կոլտնտեսությունները, վորոնք տակավին մնում են գյուղացիական միջակ տնտեսության բարձրության վրա։

Իսկ անասնապահության բնագավառում, ուր ընդհանուր դրության բարձրացման յուրաքանչյուր քայլը հսկայական ջանքեր, լուրջ հասկացողություններ և այդ գործում խոշոր միջոցների ներմուծումներ ե պահանջում, — ձեռք բերված նվաճումները տակավին հեռույն մասսայական լինելուց։ Սակայն ամենից ավելի առաջավոր կոլտնտեսությունների մի մասը կարողացել ե այնպիսի արդյունքների հասնել, վորոնք մյուս անասնապահական կոլտնտեսությունների քարելավման համար որինակ կարող են ծառայել։ Այս ասպարիզում տարվող և տարվելիք աշխատանքները մեծագույն մասով կապված են գոմերի կառուցման անհրաժեշտության հետ։ Յեւ իսկապես, միջանի շրջանում տաք գոմերի կառուցումները չափազանց յեռանդադին թափով են տարվում։ Այսպես, Շատրովյան միության կոլտնտեսություններում այդպիսի գոմերի թիվն անընդհատ աճում ե, վորը հաստատվում ե հետևյալ տեղեկությամբ.

| Յ Ա Ր Ի | Բարելավված դոմերի քանակը | Տոկոսներ |
|---------|--------------------------|----------|
| 1926    | 23                       | 100      |
| 1927    | 46                       | 200      |
| 1928    | 52                       | 226      |

Այսպիսով, տաք և տաքացվող դոմերի քանակը, 1926 թվից մինչև 1928 թ., աճել է 126 տոկոսով:

Ինչ վերաբերում է անասնապահության ասպարիզում ձեռք բերված նվաճումներին, այդ մասին շատ բան կարելի էր ասել: Կոլտնտեսություններում, մասնավորապես բոլոր անասուններն ազնվացնելու հայեցակետի նկատմամբ, ուժեղ բեկում տեղի ունեցավ:

Ձի կարելի Կանել մի շրջան, ուր կոլտնտեսություններն ազնվացրած կամ թեկուզ ցեղական անասուններ ձեռք բերելու կամ սնուցանելու համար միջոցներ ձեռք չառնելին: Միքանի շրջաններում կոլտնտեսությունները կազմակերպում են անասունների ազնվացման կայաններ հատկապես այն տեսակների համար, վրոնք ավել շրջանում ազնվացած համարվում են:

Սյուպիսի ցեղական նախիրների կարելի չէ պատահել կենտրոնա-Արդյունաբերական, Լեւին-դրադի, Հյուսիսային Կովկասի և այլ շրջաններէ միջանի կոլտնտեսություններում: Բայց այդ այն բոլորը չէ, ինչ պահանջվում է լավ կազմակերպված անասնապահական ճյուղից: Անասնապահական կոլտնտեսություններին առաջադրված պահանջները հետապնդում են այն բանին, վոր դրանք իրականում բարձրացնեն անասունների արդյունավետությունը, ուժեղացնեն ստացված մթերքների ապրանքային մասը և շրջապատի գյուղացիական տնտեսությունների ազնվացման գործում լայն ներգործություն ունենան: Անասունների արդյունավետության նկատմամբ մենք ունենք մի շարք փայլուն որինակներ, վորոնցից ամենից ավելի ցայտունները Շատրովյան միության կոլտնտեսությունների կյանքից են: Դրանցում միջին կաթնատվությունը յերեք տարվա ընթացքում բարձրացել է 1,310 կիլոգրամմից — 1974 կգր., իսկ մաքուր վաստակը՝ 33 ու. 46 կ.-ից մինչև 49 ու. 16 կ.:

Անասնապահական կոլտնտեսություն. ների գործնականից կարելի չէ այս որինակները բերել «Իսկրա» (Կայծ) ընկերությունը (Սիբիրում), վոր 1928 թ. հոկտեմբերի 1-ին ուներ միայն 39 կով, գոմ է կառուցում 100 գլուխ անասուն-

ների համար և իր անասունների թիվը հաս-  
ցրնում և այդքանի: Չորս ամսվա անասնապահա-  
կան համառ աշխատանքների շնորհիվ այդ ըն-  
կերությունը կարողանում և շրջապատի գյուղա-  
ցիական կովերի համեմատությամբ իր կովերի  
կաթնատվությունը 28 տոկոսով բարձրացնել:

Գյուղատնտեսական «Կոմմոլովո» արտելը  
(Լենինգրադի շրջան) արդյունաբերության մեջ  
գլխավոր յուրաքանչյուր աշխատավորին 3,407  
կգր. կաթ և տալիս, պիտի խոստովանել, վոր  
այդ խոշոր նվաճում և:

«Կարլ Մարքս» կոմմունան (Ուրալ) յուրա-  
քանչյուր կովի միջին կաթնատվությունը հա-  
սցրնելով 2,293 կգր., կարողանում և յուրաքան-  
չյուր կովից 81,9 կգր. ապրանքացին յուղ հանձ-  
նել, և այդ այն ժամանակ, յերբ անհատական  
տնտեսությունները յուրաքանչյուր կովից միայն  
32,1 կգր. յուղ են տալիս:

Կողեկտիվ ու անհատական տնտեսություն-  
ների կովերի կաթնատվությունը համեմատելու  
համար բերում ենք Շատրովյան միության իննը  
ձյունտնտեսությունների հետևյալ տվյալները.

Կովերի սարեկան սիջին կաթնասվուքյունը  
կիլոգրամներով

| Տ Ա Ր Ի | Կովտնտեսություններում | Դյուղացիական տնտես-<br>ություններում |
|---------|-----------------------|--------------------------------------|
| 1926    | 1310                  | 879                                  |
| 1927    | 1848                  | 1114                                 |
| 1928    | 1974                  | 1150                                 |

Յուղկենտրոնի կողմից կատարված տարբեր  
տնտեսությունների կաթնատու կենդանիների  
վերջին հետազոտությունն այսպիսի թվեր է տալիս

Կովի սարեկան սիջին կաթնասվուքյունը  
կիլոգրամներով

| ՇՐՋԱՆՆԵՐ    | Կովտնտեսութ. | Վերահսկիչ<br>ընկերություն. | Անհատական<br>դյուղացիական<br>տնտեսություն. |
|-------------|--------------|----------------------------|--------------------------------------------|
| Վյազմայե .  | 3,016        | 2,350                      | 1,612                                      |
| Տվերե . . . | 2,700        | 2,537                      | 1,612                                      |
| Մոսկվայե .  | 3,250        | 2,864                      | 906                                        |
| Ծիլին . .   | 2,989        | 2,583                      | 1,343                                      |

Միանգամայն պարզ է, վոր կոլտնտեսութիւնների կովերի կաթնատուութիւնը բարձրանում է այն պատճառով, վոր կոլտնտեսութիւններում հնարավոր է կովերի կերակրումը, նրանց խնամքը, պահպանումը, ընտրութիւնը և այլ նման աշխատանքներ ավելի լավ կազմակերպել: Այս որինակում կոլլեկտիվ տնտեսավարութիւն անավելութիւնը հատուկ պարզությամբ է արտահայտվում:

Ապրանքային կաթնամթերքների հարցում հատուկ ուշադրութեան են արժանանում Վոլոդայի կաթնամթիւթյան հետ արտադրական կապակցութիւն ունեցող կոլտնտեսութիւնների որինակելի աշխատանքները:

Մ. Մ. Գրիշայի տեղեկութիւններից լերեւում է («Вестник животноводства» № 7-8), թէ այդ շրջանի կոլտնտեսութիւններն ինչպիսի հաջողութիւններ են ունեցել: Այդ լերեւում է հետևյալ աղյուսակից.

| ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ<br>ԱՆՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՏԻՊԵՐԻ | Մի կովի ապրանքային կաթը<br>ցենտներով | Տոկոսական հավելումը ի դիմաց<br>անցյալ տարվա |
|------------------------------------------|--------------------------------------|---------------------------------------------|
| 1. Ձբավոր տնտեսութ.                      | 9,77                                 | 34,8                                        |
| 2. Միջակ »                               | 10.01                                | 17.3                                        |
| 3. Ունեւորների »                         | 10,73                                | 6,96                                        |
| 4. Կուլակային »                          | 9,32                                 | 2,60                                        |
| 5. Կոլտնտեսութիւնների                    | 13,12                                | 136,0                                       |
| Միջին                                    | 10,59                                | 39,33                                       |

Այս աղյուսակը ցույց է տալիս, վոր կոլտնտեսություններն ապրանքալին կաթի արտադրության մեջ անկասկած գերազանցում են:

«Թերահավատներն» այս բոլորը կլուսաբանեն պատահականությամբ և մասսայականություն չստացած մասնակի փաստերով Այդ հերքելու համար բերենք մասսայական տվյալներ, վորոնք համոզեցուցիչ կ'ըլլով վկայում են, վոր անասնապահության ասպարիզում կոլտնտեսությունները խիստ առաջ են անցել: Այսպես, Կենտրոնականի 1928 թ. Սիբիրում կատարած հետազոտությունների համաձայն կոլլեկտիվ և անհատական տնտեսությունների անասունների արտադրողականությունները հետևյալ պատկերն ունեն.

| ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԻՊԵՐԸ       | Կովերի տարեկան կաթնատու-վությունը (կգր.) | Մի տարում վոչ-խարից ստացած բուրդը (կիլոգ.) |
|--------------------------|------------------------------------------|--------------------------------------------|
| Գյուղացիական ան. տնտես.  | 896                                      | 1,4                                        |
| Կոմսունաներում . . . . . | 1,352                                    | 2,4                                        |
| Տարբերությունը . .       | 456                                      | 1,0                                        |

Թե վորքան մեծ է կոլտնտեսությունների այս նվաճումը, կպարզվի հետևյալ հաշվից. ան-

հատական տնտեսութիւն մի կովի տարեկան կաթի պակասը, կոլտնտեսութեան համեմատութեամբ, հավասար է 456 կիլոգրամմի. յենթադրելով, վոր բոլոր անհատական տնտեսութեանները միասին ունեն 20 միլիոն գլուխ անասուն, կաթի տարեկան ընդհանուր պակասը կլինի 9,120,000 տոնն: Նույնը նաև բրդի նկատմամբ: Մի վոչխարի տարեկան պակասն է մի կիլոգրամմ. յենթադրենք 25 միլիոն վոչխար, ուրեմն բրդի տարեկան ընդհանուր պակասը կլինի 25,000 տոնն կամ 1,660 վազոն: Այս մոտավոր հաշիվը կատարված է համաձայն Սիբիրի անասունների արտադրողականութեան, վորը, ինչպես հայտնի յե, իր բարձրութեամբ աչբի չի ընկնում. և յեթե տարբերութեանը վերցնենք արդյունավետ շրջանների տվյալների համաձայն, այդ դեպքում միջերջների վերոհիշյալ պակասն ավելի ևս կբարձրոնա: Սիբիրի նույն տվյալների համաձայն նկատելի յե, վոր արդյունաբերութեան աճումն առաջնութեց շարժում ունի: Այսպես, որինակ, յերբ համեմատում ենք կոլտնտեսութեան մի կովի տված յերկու տարվա միջին կաթերը, տեսնում ենք, վոր մի կովի տարեկան միջին կիթը 1927 թ. յեղել է 1380 կիլոգր., իսկ 1928 թ.—1,500 կգր.: Այստեղ անկասկած է արդյունաբերութեան աճումը, վորը կլինի նաև հաջորդ տարիներում:

Կարծում եմ, վոր այս հարցը փակելու համար մատնանշածս որինակները լիովին բավական են:

Սակայն կարող ե յերկուդ առաջանալ այն իմաստով, թե նորագույն բարձր տեխնիկայի հիմունքներով անասնապահություն կազմակերպելով, գոմերի կառուցման և նախիրների կազմակերպման ու ամբողջացման գործում խոշոր գումարներ դնելով—արդյոք հնարավոր կլինի պարտքերի տակից դուրս գալ:

Մեր առաջ ե կոլտնտեսությունների Շատրոպյան միությունը, վորտեղ անասնապահության ճիշտ դրվածքը հետևյալ արդյունքներն ե տվել.

1927-28 թ. ստացված սափուր ոգուսի յեվ կովերի արժեքի համեմատությունը

| ԿՈՆՏՆՏԱՆՏԻՆՈՒՅՈՒՆ-ՆԵՐԸ | Կովերի արժեքը ուրլիներով | Մաքուր վաստակը ուրլիներով | Մաքուր վաստակի տոկոսական հարաբեր. կովի արժ. հետ |
|------------------------|--------------------------|---------------------------|-------------------------------------------------|
| Արեգակի ճառագայթ       | 240                      | 237                       | 98,6                                            |
| Կարմիր աստղ . .        | 633                      | 628                       | 99,2                                            |
| Կարմիր դրոշ . . .      | 675                      | 645                       | 95,3                                            |
| Կարլ Մարքսի անվ.       | 428                      | 785                       | 183,5                                           |
| Կարմիր արծիվներ .      | 776                      | 945                       | 121,7                                           |
| Աստղ . . . . .         | 460                      | 275                       | 69,7                                            |
| Նոր կյանքի ուղին       | 1470                     | 1394                      | 95,0                                            |
| Ընդամենը . .           | 4,682                    | 4,909                     | 104,8                                           |

Այսպես, ուրեմն, գործի լավ կազմակերպումը հնարավորութիւն է ապրիս մի տարվա ընթացքում մաքուր վաստակ ստանալ ավելի, քան կովի լրիվ արժեքն է։ Այս տվյալ դեպքում մաքուր ընդհանուր վաստակը բոլոր կովերի արժեքից գերազանցում է 217 ու, կամ մաքուր վաստակը կովերի արժեքից բարձր է  $4,8\%$ ։

Վերջացնելով անասնապահության հարցը, չի կարելի կանգ չառնել կոլտնտեսութիւնների այդ ասպարիզում կատարելիք աշխատանքների հետևյալ շրջանների վրա։ Մանր անասնապահության նկատմամբ կոլտնտեսութիւնների աշխատանքներում ուժեղ բեկում է նկատվում։ Ներկայումս արդեն կազմակերպվել են և շարունակում են կազմակերպվել խոշոր վոչխարաբուծական տնտեսութիւններ, վորոնք ունենալու չեն 10,000 գլուխ վոչխար և դեռ ավելի։ Ստեղծվում են վոչխարաբուծական տնային տնտեսութիւններ, վորոնք այդ գործը դնում են որինակելի վիճակում և տալիս են ապրանքային բրդի խոշոր արտադրանք։ Մենք դեպքեր գիտենք, յերբ հինգ վեց կոլտնտեսութիւնները ցանկանալով մի ընդհանուր խոշոր հոտ կազմել, իրենց վոչխարաբուծական մասերը միացրել են ու կազմել մի ընդհանուր վոչխարաբուծական խոշոր տնտեսութիւն։ դրանք իրենց 38 տնտե-

սութիւն մյուս ճշուղերում շարունակում են մընալ միանգամայն անկախ տնտեսություններ։ Խոշոր կոլեկտիվներում վոչխարների միայն սեկմետիսացիա կա. այս ընթացիկ տարում կանցկացվեն 120—140 հազար վոչխարից վոչ պակաս։ Առաջիկա տարում կուտնտեսություններում վոչխարների մետիսացիան կընդգրկի վոչ պակաս քան 400 հազար գլուխ վոչխար։

Վոչխարների ազնվացման նպատակով ծրագրվեց 1929 թ. կազմակերպել բեղմնավորման կետեր, թվով 2149՝ բոլոր կուտնտեսությունների 5%-ը։ Յեւ իսկապես, մեր ունեցած տեղեկությունները վկայում են, վոր բեղմնավորման կետեր ունեցող կուտնտեսությունների տոկոսը բավականին բարձր է։

Խոզաբուծության ասպարիզում մի շարք տնտեսություններ փաստորեն կազմակերպելն ցեղական և զտարյուն տեսակների բուծարաններ։ Ներկայումս բեկոնի գործարանների շրջաններում խոշորագույն խոզաբուծական տնտեսություններ կազմակերպելու ամենալուրջ աշխատանքներն են տարվում։ Յենթադրվում է, վոր այդ գործարանների հում նյութի խոշոր մասը կուտնտեսությունները պիտի տան։ Կուտնտեսությունների կողմից այդ ուղղութիւնում բեռք առնված մասնաշաղկան միջոցները

միանգամայն գոհացուցիչ են: Այսպես, միանգամայն վոչ տիպիկ խոզաբուծական կոլտնտեսությունների տեղեկությունների համաձայն բեղմնավորող կետեր ունեն՝ կոմմունաների 75<sup>0</sup>/<sub>100</sub> ը, գյուղատնտեսական արտեղների 12,5 տոկ. և հողի համայնական մշակման ընկերությունների 24 տոկ.: Բեղմնավորման կետեր ունեցող կոլտնտեսությունների աշխարհի տոկոսը, գործի ըսկրզրնական շրջանում, բավականաչափ բարձր պիտի համարել:

Թռչնաբուծության ասպարիզում նույնպես կոլտնտեսությունները շատ հետաքրքիր աշխատանքներ են տանում. այնպիսի աշխատանքներ, վորպիսին մեր տնտեսության անցյալ պրակտիկայում չենք պատահում: Բացի այդ, կոլտնտեսությունները հիանալի ցեղական կենդանիներով հոկայական բուծարաններ են հիմնում: Ձկա վոչ մի շրջան, ուր այդ հարցով ընդհանուր հասարակական միտքը չգրադվի: Մի շարք կոլտնտեսություններ կազմակերպում են խոշոր արդյունաբերական տիպի թռչնային տնտեսություններ — մեկ անգամից միքանի հազար ճուտ հանող ինկոբատորներով: Այդպիսի տնտեսություններ կազմակերպվել են և ներկայումս ել կազմակերպվում են ամենազխավոր շրջաններում՝ Հյուսիսային Կովկասում, Սիբիրում, Կենտրոնա-

կան. Սևահողյան և Կենտրոնական-Արդյունաբերական շրջաններում, Ստորին Վոլգայում, Թաթարական Հանրապետության մեջ, Ուրալում և այլն:

Ամփոփելով բոլոր վերոհիշյալները, կարելի լիք ապել, վոր անասնապահության բնագավառում կոլտնտեսություններն, անկասկած, խոշոր նվաճումներ ունեն: Սակայն ինչպես մյուս ճյուղերում, այնպես ել անասնապահության ասպարիզում, կոլտնտեսությունները հնարավոր մաքսիմում արդյունքների հասնելու համար դեռ լիք կար ժամանակ համառ աշխատանքներ պիտի տանեն:

## ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼԻԶԱՑԻԱՆ ՅԵՎ ԽՈՇՈՐ ԿՈԼԼԵԿՏԻՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Անցյալ տարի սկսեցին կազմակերպվել կոլեկտիվ շինարարության նոր, տակավին անորոշ ձևեր: Խոսքը վերաբերում ե խոշոր կոլտնտեսություններին, վորոնք ստեղծված են ամբողջ համայնքներից և նույնիսկ գյուղախմբերից: Դաշտերը, վոր առաջնեքում բազմաթիվ մանր հողամասերի եյին բաժանված և մշակվում եյին կիսատանարխիստական մեթոդներով, ներկայումս փոխվում են ընդհանուր համատարած կուլտուրական դաշտերի, վորոնք պիտի գյուղատն-

տեսական նորագույն գործիքներով մշակվեն։ Մինչ այժմս կոլտնտեսային սիստեմը հարստացել է մեծ քանակությամբ խոշոր կազմակերպություններով։ Մինչև 1929 թ. հունիսի 1-ը կազմակերպված կոլտնտեսությունների քանակը հետևյալ պատկերն էր ներկայացնում.

| Ե Ր Զ Ա Ն Ն Ե Ր Ը             | Խոշոր կոլտնտեսութ. քանակը | Նրանցում միացած տնտեսություն. | Հողային տարածութ. (հեկտարն.) | Ցանքային տարածութ. (հեկտարն.) |
|-------------------------------|---------------------------|-------------------------------|------------------------------|-------------------------------|
| Միջին Վոլգյան շրջան . . . . . | 19                        | 4,164                         | 106,371                      | 31,894                        |
| Ստորին Վոլգյան » . . . . .    | 17                        | 3,080                         | 89,031                       | 32,027                        |
| Սիբիրյան » . . . . .          | 37                        | 3,666                         | 176,457                      | 60,849                        |
| Ուրալյան » . . . . .          | 16                        | —                             | 67,683                       | —                             |
| Բաշկիրյան Ավ. Ս. Խ. Հանրապ.   | 8                         | 1687                          | 44,350                       | —                             |
| Թաթարական Հանրապետություն     | 7                         | 766                           | 9,945                        | 8,338                         |
| Վոստոկյան շրջան . . . . .     | 3                         | 190                           | 3,000                        | 1.667                         |
| Ղրիմի Ավ. Խ. Հ. . . . .       | 3                         | 126                           | 3,721                        | 1.813                         |
| Նիժնի-Նովոգորոդյան շրջան .    | 1                         | —                             | 1,500                        | 500                           |
| Հյուսիսային շրջան . . . . .   | 1                         | —                             | 14,447                       | —                             |
| Հաղախստան . . . . .           | 24                        | 1927                          | 80,377                       | 26,384                        |
| Կենտ. Սևոհող. շրջ. (Ա. Կ. Օ.) | 11                        | 4,254                         | 48,103                       | —                             |
| Հյուսիսային Կովկաս . . . . .  | 9                         | 4,524                         | 146,717                      | 84,561                        |

Խոշոր կոլլեկտիվ շինարարության հաջորդ շրջանում պիտի վճռականորեն իրականացնել բոլոր այն միջոցները, վորոնք կնպաստեն գյուղատնտեսական այդ վիթխարի կազմակերպությունների տնտեսական ու կազմակերպչական վիճակի բարձրացման: Կոլտնտեսությունների ինդուստրիալիզացիան, այդ կարևոր և նոր միջոցը հենց այդպիսիներից է: Վերջիվերջո լավ կազմակերպված ինդուստրիալ դրվածքները խոշոր կոլտնտեսային շինարարությանը շատ են ոգնում գյուղատնտեսական խիստ խոշոր կոմբինատ-ձեռնարկություններ դառնալու: Կոլտնտեսությունների ամբողջ սիստեմի, իր տնտեսություններն ինդուստրիացման լենթարկելու գործում մինչ որս ունեցած փորձերը չափազանց թույլ են: Սակայն այժմս արդեն վորոշակի կարելի յե ասել, վոր կոլտնտեսությունների ամեն տեսակի ինդուստրիալ դրվածքները հրաշալի արդյունք են տալիս: դրանք, շրջապատի գյուղացիական տնտեսությունների նյութական, վիճակի վրա խիստ մեծ ազդեցություն են հայտնաբերում:

Թամանակակից կոլտնտեսությունների ինդուստրիացման իրական սլատկերը մոշ լրիվ չափով արտացոլում է հետևյալ ավյալներում.

Կոլոսնիսեություններում յեղած խոսք  
ձեռնարկությունները


| Ձեռնարկությունների անունները                 | Քանակ |
|----------------------------------------------|-------|
| Խոշոր աղացներ . . . . .                      | 16    |
| Յուզահան դորժարաններ . . . . .               | 25    |
| Կրախմալի » . . . . .                         | 7     |
| Աղյուսի » . . . . .                          | 15    |
| Յուզ պատրաստող դորժարաններ . . . . .         | 150   |
| Պամիդոր յեփող » . . . . .                    | 4     |
| Չորանոցներ . . . . .                         | 15    |
| Թռչնա-հավիկթային ձեռնարկություններ . . . . . | 80    |
| Մանող » . . . . .                            | 12    |
| Ծխախոտային » . . . . .                       | 5     |
| Հատիկներ մաքրող » . . . . .                  | 40    |
| Վերանորոգող արհեստանոցներ . . . . .          | 48    |
| Ընդամենը . . . . .                           | 417   |

Իհարկե, արդյունաբերական ձեռնարկությունների թիվը փաստորեն շատ ավելի չե, քան ցուցադրում է տրված, մանավանդ, յերբ մանր ձեռնարկությունները ևս հաշվելու լինենք: Դը-

բանից հետևում է, վոր կոլտնտեսությունների  
ինդուստրիացումն արդեն սկսված է և այսուհետև  
ուժեղ թափով պիտի ծավալվի, վորովհետև այդ  
են պահանջում հենց նրանց գործունեության  
շրջանի կոլտնտեսությունների տնտեսական  
վիճակը և պետական տնտեսության շահերը:

Վերջացնելով կոլտնտեսությունների նվա-  
ճումների այս համառոտ ակնարկը և հանձնելով  
այն լայն քննության, պիտի ասենք, վոր կոլ-  
տնտեսությունները շատ բան տակալին անել  
չեն կարողացել: Շատ կոլտնտեսություններ, ան-  
գիտության և միջոցներ չունենալու պատճառով,  
տակալին իրենց տնտեսությունների բարվոքման  
աշխատանքներին չեն անցել: Բայց և այնպես,  
կոլտնտեսությունների խոշոր մեծամասնության  
փաստական նվաճումները ցույց են տալիս, վոր  
այդ գործում հսկայական առաջադիմություն է  
և կատարված: Ավելի բարձր նվաճումների ձգտող  
հետագա շարժումն ապահովված է նրանով, վոր  
կոլտնտեսությունների ժապավեններն ընդգրկող սո-  
ցիալիստական մրցակցության հսկա ակիբը, նույն  
այդ մասնաների ստեղծագործությունը, նորից  
ուժգնապես կլիթանի:

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԻՄՈՒՆԻՍՏԻԿԱՆ ԳԵՂԱՐԱՅԻՆ ԿԵՆՏՐԱԼԻ ՄԱՍԻՆ











ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038355

A  $\frac{I}{3722}$

ԳԻՆԸ 7 ԿՈՊ. ՄԱՍ. (1 $\frac{1}{2}$  մամուլ)



---

Н. Ерофеев

Колхозные достижения

---

Госиздат ССР Армении  
Эривань—1930